

եւ սպաննալեօք, խռովարկ, կռուազբօս, եւ չարանիւթ անձանց ոմանց, որք յայտնի եւ յանդիման ոչինչ են, ոչինչ կարեն խօսիլ եւ առնել, այլ են շրջօղք տանէ ի տուն, դատարկ, փասքուք, հետաքրքիրք, եւ վրայի խօսօղք եւ հոտեցուցանօղք հնրկունն, որք եւ նման այնմ գարշելոյ ձկան ինքեանք ի յատակս ծովու գաղին եւ հետօքն իւրեանց զեկեղեցիս եւ զհնրկունիս ապականեն արկանելով զհոտեցուցիչ եւ զապականիչ թասկիրայս յեկեղեցիս, եւ տան զգոթկղութիս բազմաց, եւ կուտեն զկարծիս ի չիբ անմեղաց, չմտածելով յիմարացն թէ՛ որ լոկ եւ ցընդական բանիւ բանբասեն, դտպրտելիք են, ո՞րքան եւս որք ի գիրս արձանացուցանեն եւ զբնմ անպարտս ի բերան արկանեն. որոց ահա գրեմ զի զղջասցին եւ ի բաց կացցեն այսուհետեւ, եւ թէ ոչ, ը բանիւ են եւ անիծեալք յԱՅ եւ ի մէնջ ի հոգի եւ մարմին մինչեւ զղջասցին եւ ի հրնրկի խոստովանեսցին: Եւ վերջապէս պատուիրեմ ամենեցունցդ սիրովն քի՛, Արեւելականացդ եւ Արեւմտականացդ, զի որքան խօսք, զրոյցք եւ բանակռուիք անցին ի միջի ձերում վն այսր իրակունես, զնմն մոռացիք եւ հանջիք ի մտաց ձերոց, եւ մի եւս վերակրկնելով արծարծեսջիք ի միտս եւ ի բանս. եւ կամ զհրդտ եւ օգտակամ որդիսն սրբոյ Աթոռոյս, զՊտրգ վրնկտ եղբայրն եւ զբարեմիտ իշխանսն մեր իբր ընդգրիմացօղ կարծելով հրմնց մերոց ի մեղադրանս ունիցիք ի միտս ձեր ... Ուրեմն ոչ պարտիք այսուհետեւ ներհակիլ նոցին